Հավելված
ՀՀ առաջին փոխվարչապետի 2018 թ.
դեկտեմբերի 10-ի N 358 - Ա
որոշման

«ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳԻՐԸ

1.	Ծրագրի նպատակը	«Շեն» ԲՀԿ-ի ուսումնասիրությունների միջոցով բացահայտված համայնքային ժողովներում հաստատված հետևյալ խնդրի լուծումը. Գյուղական ճանապարհների, հեղեղատարների ու կամուրջների, փոքր ջրամբարների կառուցում և նորոգում
2.	Ծրագիրը բարեգործական որակելու նպատակը	Սահմանված կարգով հարկային և մաքսային արտոնությունների ստացում
3.	Բարեգործը	1. «Շէն-Ֆրանսիա» բարեգործական կազմակերպություն, հասցեն՝ 24 rue Maubeuge, 75009, Paris, France 2. «Հաց աշխարհին» - Գերմանիայի եկեղեցիների ընկերակցություն, Bread for the World - Church Development Service, հասցեն՝ Caroline - Michaelis-Str.1, 10115 Berlin, Germany 3. Շվեյցարիայի Միջեկեղեցական աջակցություն (EPER), հասցեն՝ Bd de Grancy 17bis Case postal 536, CH-1001 Lausanne, Switzerland
4.	Ծրագիրը կատարողը	«Շեն» բարեգործական հասարակական կազմակերպություն, հասցեն՝ քաղ. Երևան, Նալբանդյան 110, հեռ. 060 499 010, 010 567031, ՀՎՀՀ՝ 01503283

5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց ձորի, Կոտայքի մարզերում, ԼՂՀ-ի հեռավոր, սահմանամերձ գյուղեր և նախկին շրջկենտրոններ, բնագավառը՝ ճանապարհաշինություն
6.	Ծրագրի բյուջեն	160.000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ՝ հինգ տարվա համար
7.	Բարեգործություն ստացողը	Ծրագրի շահառուներն են ՀՀ Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց ձորի, Կոտայքի մարզերի, ԼՂՀ-ի հեռավոր, սահմանամերձ գյուղերի և նախկին շրջկենտրոնների բնակիչները: Գյուղերը, որտեղ կիրագործվեն ճանապարհաշինական ծրագրեր, կընտրվեն «Շեն» ԲՀԿ-ի ուսումնասիրությունների միջոցով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշմամբ հաստատված 2014-2025 թթ. «Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի» և ՀՀ կառավարության 2017-2022 թթ. ծրագրի «Սոցիալական ոլորտ» բաժնում տեղ գտած դրույթները:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2019 թ. հունվարի 1-ից մինչև 2023 թ. դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	2019-2023 թթ. ընթացքում կնորոգվեն գյուղական ճանապարհներ (արժեքը 40.000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ), հեղեղատարներ և գյուղական կամուրջներ (արժեքը 120.000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ)
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Շինանյութեր և ճանապարհաշինական սարքավորումներ (նախատեսվող գինը՝ 70.000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ՝ ներքին շուկայում գնվող Կատարվելիք շինարարական աշխատանքների արժեքը կկազմի 90.000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Տվյալ ծրագրի շրջանակներում կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ	«Շեն» ԲՀԿ-ն առաջարկվող ծրագրի իրականացման ընթացքում համագործակցելու է ՀՀ և ԼՂՀ մարզերի տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

	կազմակերպությունների հետ	
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերա-հսկողության մեխանիզմների նկարագրությունը	«Շեն» կազմակերպության լիազորված ներկայացուցիչները պարբերաբար պետք է այցելություններ կատարեն ծրագրերի իրագործման վայրեր՝ աշխատանքների ընթացքն ստուգելու համար: Համաձայն պայմանագրերում նշված ժամկետների՝ շնորհատու կազմակերպությունները կիրականացնեն ծրագրերի անկախ վերահսկում: Համաձայն ընդունված կարգի՝ պարբերական հաշվետվություններ կներկայացվեն Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՄԻՐԶՈՅԱՆ